

ՏԻՐ ԵՒ ՏՆՕՐԷՆԻ

Ե. ԲՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է

գրու թիւն պէտք է ուղղել առ

Տնօրին. ԱՐՇԱՒՈՅՍ քաղաքի

ԳԱՀԻՐԷ (Խաղաղասուրի)

Թիւ.

E. TOROSSIAN

Direct. propr. du journal arménien

ARCHAËLOUCE

LE CAIRE (EGYPTE)

Boite Postale No.

# ԱՐՇԱՒՈՅՍ

## Լ Ր Ա Գ Ի Ր

### ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դասին.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան մասնակ.	20
Վեցամսեայ »	12

ՔԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆՆԻԿ  
Եւ թղթատարի ծախքը  
Խնարարութեան վրայ է :

Խնարարութեան ուղղուած  
չգրութիւնք եւ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՐ  
Կանխիկ վճարելի են

ՔԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱՒՈՅՍԻ

## Բ - ՏԱՐԻՈՅ

Արշալոյս ի Տնօրինութիւնը միեւնոյն  
հաստատմանութեամբ պիտի շարունակէ իր  
ԵՐԿԻՐՈՒԹԻՒՆ ՏԱՐԻՆ . և այդ իրաւունք կուտայ  
իրեն, բանալ Երկրորդ տարւոյ բաժա-  
նորդագրութիւնը :

Արշալոյս ի ծաւալին ընդարձակման  
և այլ բարեփոխութեանց համար պիտի ըս-  
պասենք ժամանակ մը, մինչև որ այդ փո-  
փոխութիւնները ընել կարենալու համար  
ապագաութեամբ պէտքերը մեզ հասնին :

Գահիրէի համար Արշալոյս ի տարեկան  
բաժանորդագիրը զեղջելու փոխարէն՝ նոյնը  
պիտի պահենք և այդ փոքրիկ տարբերու-  
թիւնը պիտի հաստատենք ամեն բաժա-  
նորդի ձրի զրկելով թիֆլիսէն օրինակ մը,  
որ մամուլ տակ է՝ և 200 ի մօտ էջերէ  
պիտի բազկանայ :

Արշալոյս ի Տնօրինութիւնը այս առ-  
թիւ կը խնդրէ իր արտասահմանի բաժա-  
նորդներէն, որպէսզի հաճին իրենց ան-  
վճար բաժանորդագիրներն փութով հաս-  
ցնել :

## ԼԻՆԻԼ ԹԵ ԶԸ ԼԻՆԻԼ

(ԳԱՀԻՐԷՒ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ)

(Շարն . նախորդ թուէն և վերջ .

Ու յետոյ ինչ ըրին . սկսան ինքիւրազ-  
արջներուն գործերը ձաղկել . ինքզինքնին  
անոնցմէ անշտանալու համար քիչ մնաց որ,  
այդ միացեալ ինքիւրազը որբախնամները ի-  
րենց կնիքները փոխելով սապէս արձանա-  
գրել տային . Ռեժի մօտօրոյ ՏԵ ԳՕՐԸՅԵՆԱՍ  
Արմէնիէն ՏԻՐ ԲԵՆ :

Ալ այնուհետեւ զրոյցներ շրջեցան թէ,  
« Գահիրէի մէջ որբախնամական պրոսա մը  
պիտի հաստատուի, որուն ժօնաներուն ի-  
րական արժէքովը Հայաստանի որբանոցնե-  
րուն գոյութիւնը պիտի ապահովուի » և ըն :

Շիտակը այս անպատեհութիւնները  
թերեւս տեղի չ'ունենային և միահամուռ  
գործէին, եթէ սազայելի սիրականներէն  
խափշիկի մը խափանարար ձեռքը շատ  
կանուխէն գործին մէջ մտած չ'ըլլար :

Սակայն հոգ չ'է . ասոնք ամենքը եղան  
բայց նախաձեռնութեան ոգին և ոչ մէկէն

ալ պակեցաւ . իւրաքանչիւր ընկերութիւն  
իր կարգին շանաց օգտակարութիւն մը ցոյց  
տալ և ցոյց տուաւ կրնանք ըսել :

Սոյն տիրող ընդհանուր շարժման մէջ  
ամեն ինչ աներեւակայելի գործունէութեամբ  
յառաջ քալեց, սակայն և այնպէս գործին  
նիւթականին աւելի բացառիկ մղում մը տա-  
լու համար ձեռնտուութեան մը մեծ ոյժը  
պակեցաւ . այն էր Գահիրէի Հայ Տիկնանց  
օժանդակութիւնը դէպի որբախնամ գործը :  
Մեր Հայ Տիկնաներուն վերաբերումը խիստ  
աննշան եղաւ կրնանք ըսել . թէպէտեւ հե-  
տաքրքրուեցան որբերու հարցով, բայց և  
այնպէս հետաքրքրութիւնը միշտ հետաքրք-  
րութիւն մնաց և անկէ անդին չ'անցաւ :

Կարծես անտարբերութիւնը ահազին ու  
վիթխարի պատե՛ջ մը կանգնեց անոնց առ-  
ջի, և կարելի չ'եղաւ միջոց մը զանոնք գուրս  
հանել տունէն՝ այս կարևոր պէտքին  
համար սահմանուած աշխատութեանն ըս-  
տին մասնաձեւելու համար Գահիրէի գործու-  
նէութեան առողջ մթնոլորտէն երբէք չի  
կազուրուեցան, և մենք ամեն օր օգին  
անրաւ տարածութեանը մէջ, խնամակալու-  
թիւն, խնամակալութիւն կը պոռայինք, և  
մեր արձագանքը՝ միայն մեր սրտառուչ  
հաւանքներուն կը պատասխանէր :

Ձի կրցանք երբէք մեր խելապատակին  
մէջ սեղմեցնել թէ՛ ինչ և որպի՛ս արգելք-  
ներ կը կասեցնեն մեր Հայ Տիկնաները ի-  
նպատ որբերու աշխատելու գործին մէջ :

Մի քանի Տիկնաներ անցեալները կ'ը-  
սէին թէ՛ որբերու յատուկ Տիկնանց խնա-  
մակալութիւն մը կազմելու համար արտա-  
քոյ կարգի զոհողութեան պէտք կայ . այդ  
նուիրական գործին համար օրուան մէկ եր-  
կու ժամերը զոհել պէտք է . միեւնոյն ա-  
տեն ցաւ կը յայտնէին թէ՛ քանի որ մարդ-  
կային զգացումը մարած չ'է և կամ այդ ա-  
ւելնոտ զգացման բեկորներէն քիչ մաս  
մը տակաւին կը գտնուի իրենց սրտին մէջ,  
ամենայնօրեայ կամօք պիտի ստանձնէին այդ  
լուծը, եթէ երբէք այդ մէկ երկու պա-  
րագոյ ժամերը կարենային ձեռք ձգել :

Ահա հիմայ հեղնութիւնը կատարելու-  
թեան կը հասնի . որովհետեւ մենք այդ կար-  
գի խօսողներուն սապէս կ'ըսենք . « Դ՛ի Տի-  
կնանք, զթուութեան քօղին տակ փոխանակ  
ձեր առատ զբաղումները պատճառ բռնե-  
լով՝ մարդասիրական գործ մը մէջտեղ բե-  
րելու խուսափելէնդ, աւելի լաւ չ'իկնիք  
ձեր անգթութիւնը դերասանէք ինչ որ մենք  
զայն աւելի դիւրին կ'ըմբռնենք :

Շաբաթական այցելութիւններուդ հա-  
մար ամբողջ օրերնիդ զուր տեղը կ'ան-

ցնէք . Բասալաշէն, Գաւուաշէն և Մասալ  
Բէքոյն զնամ ձիւններուդ հեշտակը խօ-  
սակցութեանը համար պարագոյ ժամեր կը  
գտնաք . գրեթէ շատ իրիկուն այս ինչին  
և կամ այն ինչին տունը հաւաքուելով՝ սե-  
ղաններուն շուրջը բարոտուած՝ թփեր խաղա-  
լով ձեր լուսաները խօլ քմահաճոյքի հա-  
մար կ'ըսպառէք, շատ անգամ մինչև առա-  
ւօտ նստելով հանգերէ . ինչո՞ւ համար ու-  
րեմն չ'էք ունենար այն բարի կամեցողու-  
թիւնը՝ շարաթը դէթ Յ-Ա ժամ տեղ մը  
հաւաքուելով որբերու հարցով զբաղելու :

Այդեօք պատշաճ չ'էք նկատեր ինա-  
մակալութիւն մը կազմելով եկամտաւի նո-  
բանոր աղբիւրներ ստեղծել . մանաւանդ որ  
ձեր նախաձեռնութեամբ հիմնուած ընկերու-  
թեան մը յառաջգիմութիւնը և յաշողու-  
թիւնը ամեն տարակոյսէ գերիվեր է :

Գոնէ որոշ ժամանակուան մը համար վերջ  
տուէք ձեր սա լոփէր ին . առ ժամանակ-  
եայ կերպիւ քաս-քասոյ մը ըրէք և վար  
թողուցէք այդ թղթերը ձեր ձեռքերէն,  
ու աշխատեցէք ինպատ որբերուն :

Մեղք են, գթացէք անոնց վրայ . դուք  
ալ աշխատութեան բաժին մը ունեցէք այս  
գործին մէջ, քաջ դիմաւորով որ ձեր ընե-  
լիք գոյզն ինչ զոհողութիւնը այդ տնտաղ  
սերունդին ցուրտ ու սնարե կեանքը պիտի  
պահպանէ : Օն ուրեմն, որբերու համար  
Տիկնանց խնամակալութիւն մը պէտք է Տի-  
կնանք'ը կը հասկնա՞ք խնամակալութիւն մը,  
կազալեմ պատասխան տուէք :

Համոզեթիւն գանկը պահ մը ձեր առջևը  
ունեցէք, և զայն որբերու հարցը նկատե-  
լով հետեւեալ հարցումը ուղղեցէք անոր .  
« Որբերու խնամակալութիւն . խնամակա-  
լուհի . . . լինի՞լ թէ չ'իկնիլ »

Զըլլայ որ տարակուսիք Տիկնանք .  
գանկը անպատճառ ձեզ պիտի պատասխա-  
նէ :

## ԻՆՉ ԱՆՈՒՆ ՏԱՆՔ

Հարուստ, շատ հարուստ ըլլալու է Տիար  
Սմբատ Բիւրատ ժամանակի կողմէն, որ՝ հա-  
կառակ իր բազմակողմանի աշխատութեանց,  
կրցած է՝ անշուշտ իր բննագաւառութիւն հարիւր  
յիսունի շտի տողեր նուիրել « Նոր Օրի » մէջ  
մեր « Ձկնորսին » առթիւ :

Քննադատութիւն . . . ստանք այս անու-  
նը այդ գրութեան :

Յիբաւի յարգելի գրողը հրաշալի կերպով  
ի վեր կը հանէ մեր վէպիկին նիւթը, մանրա-

մասնաձեռնակ հանդերձ, բայց այդ նիւթը արդէն հոգեբանական կամ խմաստասիրական եւ կամ միաթիւքական հանգամանքներով բողբոջուած չ'ըլլալով, դպրոցականի մ'անգամ գծուած բուժիչն չ'ներկայիք բմբռնուելու համար: Այնպիսի նիւթ մը գտնել, այդ ալ շատ դժուարն գործ մ'է. կը բաւէ որ գրողը քաղաքակրթեալ կոչուած քաղաքի մը մէջ ապրի՝ առ առաւելն ամիս մը: Ասոնք այնքան հասարակ ճշմարտութիւններ են որ երբէք պէտք չունին բացատրուելու: Կեանքար յիշեալ գրութեան այս մասին շատ կը տեսնենք « քննադատութիւն » անունը: Անցնինք ուրեմն:

Յարգելի յօդուածագիրը վէպիկին նիւթը ճարտարօրէն ամփոփելէն ետքը կը հարցնէ. « իսկ հեղինակը»: Ահա հոս է որ պիտի սկսի քննադատութիւնը: Բայց Տիար Բիւրատ մեր բընագրագնորդներէն ( թող ներուռի մեզ այս բար, որ՝ ըստ մեզ՝ յարմարագոյնն է ներկայ պարագայիս մէջ ) կ'սկսի նախ իր գործը: Յօդուածագիրը մեր ծննդավայրին պահանջին եւ մեր իսկ բնազգին հակառակ կը պահէ գրականութեան ճիւղը, որ՝ անցողաբար բռնիք՝ մտնելու ո՛չ կամք ունինք եւ ո՛չ յարմարութիւն: Հոս իրաւունք ունինք հարցնելու. « ի՞նչ է մեր բընագիրը. գործերը կ'անդամանք: Եւ եթէ գրականութիւնը կը հակասէ իմ ծննդավայրին պահանջին ( ) , ինք միթէ վստահ է որ կը հետեւի իր ծննդավայրին՝ պահանջին, կը կարծուի որ ծննդավայրի մը պահանջը՝ եթէ գոյութիւն ունի գործագրելի է միայն այն հոգին վրայ:

Միջավայրին պահանջը կ'անհետի երբ մարդ անկէ կը հեռանայ. իր իսկ բնազգին խօսքը չենք ընել. վստայի՛ ինչպէս ինք կ'ըսէ՝ մենք « սովոր ենք մարդիկը դատելու իրենց երեւոյթէն » իսկ ներքին մարդը թափանցելու համար գետ շատ պէտք ունինք ապրելու ընկերային խաւերու մէջ »: Թիւրեւ կը սխալի. բայց հոգ չէ՛: Աւստի բնազգը ներքին մարդն ըլլալով, իրեն կը ձգենք մեզի յայտնելու թէ իր աշխատութիւնքն ու գործունէութիւնքն իր բնազգին վրայաբար:

« Իր դատունիներն ու գաղտնիները, յաշտախ պաշտուած կանխակալ կարծիքներէ ու քրիստոնէութեան խորհրդաւորութիւնն, աւտոյլ են բաւական »: Ահա վերջապէս հասանք քննադատութեան, բառին բուն նշանակութեանը: Պաշարուած կանխակալ կարծիքներէ, այս բառերը ունին այն ամեն տարրերը, որոնց պէտք ունինք կազմելու համար նախապաշարեալ բառը: Արդ երբ գաղտնիքն ու գաղտնիքն ապաւանջուած են, աւտոյլ չ'են. իսկ եթէ աւտոյլ են, նախապաշարուած չ'են: Հոս բացայայտ հակասութիւն մը, որ ընթերցողը սարակուսանքի մէջ կը ձգէ մեր գաղտնիքին աւտոյլ կամ մեռած ըլլալուն վրայ: Ասկէ դատ քննադատական օրէնքը կը պահանջէ որ քննադատուած ամեն կէտ պարզուի օրինակով մը, որ քաղուած պիտի ըլլայ վիճարբանութեան առարկայ գրութեանէն: Եւ որովհետեւ Տիար Բիւրատ չ'է ուզած ( ինչո՞ւ ) օրինակով ապացուցանել իր տեսութիւնը, բնախալուած ենք ըսելու թէ այս ալ քննադատութիւն չ'եղաւ:

Քանի որ հակասութեան վրայ կը խօսինք մէջ ընդմէջ նաեւ սա կէտը թէ՛ յարգոյ յօդուածագիրը մեզ « բարոյախօս ու կրօնաբան գրող » անուանելէն ետքը, երկու առը վար կ'ըսէ. « զիս իրեն համար որոշած չ'է ուղի մը »:

« Եկար շատ տկար է իր արտայայտութեան մէջ »: Եթէ Տիար Բիւրատին այս գիտողութիւնը ճիշտ է, պարզապէս կը բացատրանան որ լուսագոյն է՝ աւելի հասկանալի ըլլալու համար՝ մեր հայրենակցաց ( 1 ) բարբառով խորհիլ, քան թէ արեւմտեան ոճերով գրել: Սակայն հոս ալ օրինակ կ'ուզենք. « Շարագրութիւնը՝ ուսմանը հիմքը »:

( 1 ) « Հայրենակցաց » բառէն պէտք չ'է խորհիլ. եթէ ձգենք անցիալը, գարձեալ սո վերջին ժամանակներու միջոցին բաւական թուով ազգայիններ տուինք Մանուսակաւութեան: Եթէ այն անբաղ զ զոնքը հայրենակից չ'են, ի՞նչ են ուրեմն:

մտեցող աշխարհարար մը » օրինակ, բարեկամ, օրինակ:

Մենք երբէք չենք ունեցած անթերի գործ մը կատարած ըլլալու ծագրելի յաւանութիւնք. դա վեր ի վայր չըջել պիտի ըլլար Թարգնի « ծանր գրեց » ք: Եւսեւ չեմ ուրանար որ Տիար Բիւրատ, շնորհիւ այն ապարեզին՝ զոր ընդգրկած է առ նուազն քառորդ գրեց ի վեր, աւելի մեծ պաշար մ'ունի Հայկական ներդաշնակաւոր եւ յանգաւոր բառերու. աւելի հմուտ ըլլալու է քրականական կանոններու, եւ՝ եթէ չենք սխալի՛ր՝ թէ եւ գրական աշխարհի մէջ ճանչցուած չէ տակաւին մեծ կամ փոքր երկասիրութեամբ մը, սակայն լատենտիակ ըլլալու է գրականութեան օրինաց: Եւ անշուշտ գիտէ որ իր գրածը քննադատութիւն չ'է. ուրեմն ի՞նչ է . . .

Առ այժմ կը թողուք այդ գրութեան ուրիշ վիճելի կէտերը եւ կը վստահենք Տիար Բիւրատը որ ինչպէս որ ինքը չ'էր մեզ քաջալերողը նոյնպէս ալ ինք չ'պիտի ըլլայ մեզ վընասեցողը. եթէ երբէք փափաք ունենալ գրական ապարեզին մէջ մտնելու: Բայց միայն ժամանակ կը գտնուի որ չ'պիտի կրնանք օգտուիլ իր բարեացակամական խրատներէն. քանի որ չ'է հաճած օրինակներով մեզի ցոյց տալ այն թիրութիւնները, զորս մի առ մի կը համրէ: Սա պարականութիւն մ'էր, զոր իբր ֆենդառնոյ՝ պէտք էր յարգել թէ՛ ընթերցողները եւ թէ՛ մեզ լուսաւորելու համար. շնորհք հապարտ ալ պիտի ըլլայինք իրեն:

Ինչպէս մեր հակիրճ գիտողութիւններէն կը հասկցուի գրական քննադատութիւն մ'ըլլալէ շատ հեռու է յիշեալ գրուածը:

Ըսինք որ Տիար Բիւրատ կ'անդամանք քննադատութեան օրէնքը. այսպիսի ենթադրութիւն մ'անկարելի է եւ նուազ պատուաբեր յարգելի յօդուածագիրն: Ըսինք որ պարզապէս գրելու համար գրեց, բայց Տիար Բիւրատ, ինչպէս զինք կը ճանչնանք՝ գէթ արտաքին երեւոյթէն, եւ մի քիչ ալ իր յօդուածներէն՝ յուսմամբ չ'ըստ յիշեալ իր ժամանակը, եւ երբէք չ'գրեք աննպատակ բառ մը: Զայն կարողացող պէտք է հարցնէ, ո՛չ թէ՛ ինչ կը գրէ. այլ ի՞նչ բոկ կուզէ. վստայի կը սիրէ գործակուել, քան թէ իսկայն հասկցուիլ:

Ուստի կ'ըստանանք իր պատասխանին գիտնալու համար թէ ի՞նչ անուամբ պիտի մկրտուի վերջնականապէս այդ գրութիւնը:

### ՍԱՂԻՐՈՍ ՀՅՅԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՄ ԶԵՆՍ ՊԱՇՏՈՆԵԻՅ ԲԵՐՍՈՍՈՒ

Խաղաղութեան եւ սիրոյ Աստուածը՝ Յիսուս. երբ աշխարհի վրայ է իր, ըսիք, — հուսնք բազում, մշակ սակաւ. — ու կկան օրեր, յորում մշակները շատցան. առատ ու պարարտ մշակներ, միայն եղծ ու գեղծ մշակներ, յամառ սարկանոցի, կուսպաշտ. գրպարտիչ եւ կողոպտիչ, սակայն միշտ ճշունք մշակներ անուանով:

Այժմ մենք գործնակ ան կամ իրական կեանքէն այդ մշակներուն՝ ցոյց տանք, նոցա երբեմնի գործերը: Իւր մարդորակական անյաջողութեամբ նշանաւոր այժմ Պուլկարարեանի Պ. Ա. միբրանեան պաշտօնական հարկէ ստիպեալ իւր կազմալուծեալ մարմնով ընկերացաւ Կերմանացի Տօթթօրի մը, ձմրան մէջ եկած էր մինչեւ Գոնթիանցա ( Ռուսա՛րիոյ ) եւ Պ. Թարաւեանի տան մէջ գէպի Հայաստան կրօնական արշաւանքի մը ծրագիրը կը պարարտուէր գիշերային լուսութեան մէջ, երեք սրտորներու կողմանէ. որտղորներ վարպետ ու ճարպիկ. լաւ սքողուած քրիստոնէական գիտնական ըլլալով կ'ընդունար եւ անվստահելի. նոյն լոկ մէկ մէկու հանդէպ, գէթ զիւր մը չի խաբէին, ո՛վ Աստուած: Կերմանացի Տօթթօրը կը փափաքէր որ Պ. Թարաւեան ընկերանայ իրեն. իսկ Թարաւեանի կիշը բնականաբար չէր փափաքէր երկար ամիսներ իւր էրիկէն զուրկ ա ըրիլ ու կը գտնուէր պատահաբէն. իսկ Ամիբրանեան, որ թէեւ տուն չունի սակայն զպարտելով կնոջ ալ զի զպաշտ

կողոքներէն. անոր կողմը կը բռնէր. եւ երբ Թարաւեան ինչ բնեմ, Տէրը կը կանչէ ըսաւ, իբրեւ քրիստոնէայ. Ամիբրանեան « անա քու Տէրդ » ընկելով նորա կէնը ցոյց տուաւ: Ո՛վ Գալիլիացի, երբ խաչին վրայ վերջին մարդկային շունչը կը փչէիր, վշառհար մօրկանդ իբր միսիթարութիւն « անա քու որդիք ըսելով » Աստուծալ մը ցոյց տուիք, բայց այսօր սուտ աստուծայինի Տիրոջ փոխարէն կին մը. շատ հասարակ կին մը կոչոյց կուտան, « անա քու տեղ » ըսելով, այսչափ ստորնացում քու մշակներուդ մէջ, ստակալի է եւ անտանելի, եւ՝ յանդուգն եւ լիւր, միայն մարդկային ընկերութիւնը չէ որ նոցա շատ թափանցիկ միջոցներով խաբել կը ճգնին, այլ եւ Աւետարանիդ հակընդդէմ Տիրոջ արժանապատուութիւնը Եւայի աղջիկներուն կուտան: Ուրէ չիք ու նախկին նախանձոտ Աստուածը. . . բայց մենք կը հուստանք թէեւ ուշացող, այլ միշտ վրէժնորիք եւ իւր փառքը ուրիշ չ'ուտող Աստուծոյ մը գոյութեան:

Ահա ասոնք են այս օրուան ո՛չ սակաւ մը չնկնեք որք փթխանակ կրօնային խաւարի մէջ կորածներու մօտենալու, կուզան խեղճ Հայուութեան կարեւր խոցուած սրտին մէջ երբեմն երկու արծաթի գնով եւ ստեպ չար սուտ խօստուաներով ֆրիստեկարիւն սերմանել, ո՛չ միայն պատեհ տալիս սեպելով իրենց՝ կատարուած մեծ գործողութիւնը, այլ որ աւելի ստակալի է. գո՛ւ լինելով որ՝ այդպիսի մի գործողութիւն տեղի ունեցաւ եւ մատակարարեց իրենց ստակալէդ գործելու:

Ո՛վ բարի Յիսուս, գու աշխարհի խաղաղութիւն բերելով, խաղաղութիւն քարոզելով, խաղաղութեան մէջ մշակներու նուազութիւնը նշանակեցիր, մշակներ ընտրեցիր. որք քու յայտնող պատկեցին. սակայն այսօր ինքնակոչ եւ քու շունչը ու սգիդ չ'ստացող առաքեալներ ( ի մասնայն ) աղմուկի, կուռի, սովի եւ սրածուլութեան պէտքը կը տեսնեն իրենց առաքելութիւնը, ձեւակաւու կեղծաւորաւորութիւնը ինչպէս կուզէ ըլլայ, կ'ստարել կ'արեւալու համար. եւ մարդիկ ալ, որ խեղք ունին եւ հասարակ. այդպիսիները կը կոչին կեղծարարներ: Արդեօք կը մեղանչեն քեզ գէմ ո՛վ նախապաշար սիրոյ եւ խաղաղութեան, արդեօք կը մեղանչեն մե եւ երբ ազոթեմ քեզ վերցնել եւ պակսեցնել աշխարհէ ազգայինները եւ նապեղեցնել սուտ աստուծայիններու կեղծարարները թիւը, որոնք իրենց կ'ինք քեզ հաւատար կամ քիչ մ'ալ աւելի բարձր բռնելու չար միտումը կուսնենան, չեմ յուսար. վստայի գէտեմ թէ գրուած է, որ քու փառքը այլոց չես տար:

Կազմութիւնը, ո՛չ պազանութիւնը չ'ուսմանքի սովի եւ սուրի մտնեց զբուսուր եւ ամենատաշին քրիստոնէայ հայութեան մարմինը կեղծարարներ. քրիստոնէական սրկանիք փոխանակ միսիթարելու հալ սոճեալն ու վշտահարը, յարձակեցան, խոյացան նոցա հոգիներուն վրայ, եւ կերպով վը ոյժ ու հաւանքութիւն տուին հալածող եւ սպանող գաղտնիքն. . . արդեօք այդ ալ մի գտողներէ է կրօնային, արդեօք այդ մասին ալ կրնանք Գալիլի հետ գտնել, « որպէս զի մեծ են գործ քո տէր եւ յոյժ խոր են խորհուրդք քո »: Բայց չէ, չէ, Գալիլի ստա սկիչ հրեշտակին դէմ ելաւ իւր իսկ անձը դնելու ժողովրդի փոխարէն. իսկ գուք, կեղծաւորներ, ինչ ըրէք հալածանքի ստակալի ժամերուն մէջ, ձեր աէրերը կ'ընկնեք պահեցիք, արտո՛ւ տէ՛ր, լաւ չէր լինէր արդեօք մի անգամ ընդ միշտ Աւետարանդ ինչպէս որ սուրբ, յետ անէիք, տանէիք, որպէսզի գէթ աւետարանի անուանով գործուած ոճիւրները պակսէին յաշխարհէ:

Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

### ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ոճի՛ր ՄԸ. — Անցեալ երկույ ժամը 9 ին նամակատան առջև սպաննութիւն մը գործուեցաւ:

Երկու Իտալացիներ՝ որք նամակ բաշխուելիք պատուհանին առջև կ'սպասէին,

սկսան վիճարանիլ :

Գուրա եւան կուսակու համար և ին միւսէն ճարտիկ յորձակումն մէջ, գաշոյն մը հանեց և մինչև երախակ ուր միտեց իր հա կառակորդին սիրտը :

Չոհր վարկեան մը յետոյ մեռաւ Օս մանիէ գեղարանին մէջ :

Մարդասպանը ձերբակալուեցաւ և բանտարկուեցաւ :

—Մերառաջիկայ թուով պիտի հրատա րակենք Իտալիոյ Ունպերթո թագաւորին վրայ ի գործ գրուած սպաննութեան ման րաւանութիւններն :

—Այն քսանորիոյ մէջ ժամասխտի նոր գէպը մը պատահած է, բռնուողը էլ Աշ րի թագը բնակող տեղացի մ'է :

Գէպը բռնու համագումարը 108 ն է, մահ 45, բռնուած 58, գարմանուելու վրայ հինգ :

ԱՆԻՇԻԱՆԱՎԱՆՆԵՐԸ ԱՍԻՈՒՏԻ ՄԷՉ.

—Ասիուտէն կը գրեն թէ շրջող շներուն մէջ աշխատող Իտալացի անիշխանականե րը, Ունպերթո թագաւորին մահը լսել նուն պէս կարմիր գրոջակ մը պարզելով շուրջը հաւարուած և գոչած են « կեցցէ անիշխանականութիւն », բոլորն ալ ձեր րակալուած են :

ԿԸ ԼՍԵՆՔ ԹԷ

ԿԸ ԼՍԵՆՔ ԹԷ՝ Կ. Պոլսոյ կառավարու թիւնը « Նոր Օր » ի 19րդ թուոյն միջոցաւ Մասունցիներուն ուղղուած յորդորականէն շատ գոհ մնալով, գնահատել կը փափաքի նոյն թերթի Տիտիթեոն բողոքիքի հոս սր զօնզոռ ծառայութիւնը և հաւատարմու թիւնը. տրամագրութիւն կայ, կը բեն, պատուանշան մը զրկուելու, որուն պէտքը մասնաւոր պատգամաւորութեան մը միջո ցաւ առաջին տարի ճամբայ պիտի հան ուի :

Այժմէն կը փութանք մեր շնորհաւ րութիւնները ներկայացնել ազգայ շքա կերին և կը մտայթենք որ իւր ընտրած նոր ասպարէզին մէջ աւելի ևս յառաջդիմէ . . . :

Ոմանք կ'ըսէին որ « նոր օրէն նոր բան մը չ'ստրկեցանք. » հիմակ առիթն է ըսել թէ ամեն բան ստրկելէ յետոյ, պիտի աես նենք նաև Մասունի մէջ մտաւարտ նոր կո տորած մը շնորհիւ մեր Լսարան-Բնթերցա տան յարգելի անդամոց հրատարակած օգ տալատ թերթին :

ԿԸ ԼՍԵՆՔ ԹԷ՝ տեղւոյն Ազգային Իշ խանութիւնը « Նոր Օր » ի վերջին քանի մը թիւերուն մէջ Գալտեան երկուսու վարժա րանի մասին գրուած շարունակելի և քննա րատական յօդուածներն ուսումնասիրելէ և անոնց մեծագոյն մասին « Արշալոյս » ի գը րածներուն կրկնութիւնները եղած ըլլալը հաստատելէ վերջ, բացարձակապէս որոշած է գպրոցի վերաբացման ժամանակ յիշ եալ յօդուածներու հեղինակը վարժարա նին Տնօրէն կարգել. ասով տխուրանքու հետեւեալ շարքը պիտի ունենանք այս ան րամ այցեքարտի մը վրայ շարուած :

Հիմնագիր-Տնօրէն Փիւնիկի. Հիմնագիր -Տնօրէն Կեղոնական կրթարանի. Խմբագ րակաւ « Նոր Օր » ի. Տիրէթթէօր Բօլիթիք « Նոր Օր » ի. Ատենագպիր, չ'է երկու վայր կեան վերջ Ասենապէս Գործ. Ժողովոյ Լը Լսարան ընկերութեան ևայլն ևայլն :

Է՛՛՛՛. կարծենք ասոնք կարգալու հա

մար ժամանակի և ընդհ. Բարասդարի մը պէտքը պիտի ունենանք :

ԿԸ ԼՍԵՆՔ ԹԷ՝ Նոր Օրի վարչութեան նախագահը Վեմ. Եուսաթ Պէյ Ա. ի Լ. նկատելով որ իրեն հայերէնի անտեղեակ ըլլալը հայ թերթի մը վարչութիւնը ըն գունելէ վերջը, վարելու բաւական մեծ աղքեղ մ'է, քանի մը օր առաջ իր հրա ժարակներ մատուցած է. և տեսնելով որ Նոր Օր Պաշտօնական նոր աղբով մը իւր հրատարիլը չի ծանուցանէր, բաւական վշ տացած է եղեր :

ԿԸ ԼՍԵՆՔ ԹԷ՝ Օմտուրմանի ազգայնոց կողմէ Որբասիրաց ընկերութիւններուն զը կուած 22 ոսիէն, Գահիրէի Հայոց Որբա սիրաց ընկերութեան բաժինը, որ Առաջ նորդարանը վար գնել կողմէր ուրիշ ըն կերութեան մը հաշոյն, այս անգամ Ար շաղոյսի երկաթէ ձեռքերէն ազատիլը ան կարելի նկատելով վեց ոսիւոյ գումարը վերջապէս յանձնած են Ընկերութեան :

Կը կարգանք թէ այս առթիւ հայոց որբասիրաց ընկերութեան գործ. անգամը խեղճիքեալ ոճով շնորհակալիք յայտ նած են Օմտուրմանի ազգայնոց . . . :

(Շարունակելի)

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ը

Լոնարա 3 Օգոստոս. — Պօէրներու 700 հոգինոց զօրախումբ մը անձնատուր եղած է Հընթըր զօրավարին :

Եան Համիլթըն զօրավարը Ռիւսթէն պուրկ մեկնած է ազատելու համար հոն տե զի պահակազօրքը որ Պոտէն-Բօուէլի հրամա նատարութեան տակն է և որը պաշարուած են Միման զօրավարէն : Լորտ Գիշէր Ռը նոսթըր մեկնած է Տրվէթ զօրավարին դէմ գործող զօրաց հրամանատարութիւնը ստանձ նելու համար :

Լոնարա 3 Օգոստոս. — Ռընէլ զօրա վարին զօրքերը, որոց ձիերը պակասած էին Պօէրներէն առնուած ձիերով դարձեալ վե րակազմուած են :

Պելլրատ 4 Օգոստոս. — Սերպիոյ Ա ղէքսանդըր թագաւորին անուանութիւնը այ րի Տիկին Տրակա Մաշինի հետ, տեղի ունե ցաւ այսօր փառաւոր հանդէսներով :

Հաւով 4 Օգոստոս. — Ունպերթօ թա գաւարին յուղարկաւորութիւնը ամսոյ 9 ին տեղի պիտի ունենայ Բանթէօնի մէջ :

Բարիկ 4 Օգոստոս. — Չինաստան եր թալիք ֆրանսական զօրաբաժինը 15, 600 հա գիէ պիտի բաշկանայ :

Պ. Գուրծօլէն եկած հեռագիրները Բէքիւնի վրայ քաշելու մասին բան մը չ'են խօսիր երբէք :

Ս. Բէթէրսպուրկ 4 Օգոստոս. — Յու լիս 28 ին Ռուսերը յարձակմամբ առին Սուռ կարի գծին վրայի գանուած Սանսինի կո րեւոր բերդը և 22 թնդանթ գրաւեցին. առին նմանապէս Մախալիքը, որ Պլակովէս չէնքի գիմացն է, և մեծաքանակ ուղղա միտերք ձեռք ձգեցին :

Լոնարա 4 Օգոստոս. — Ճարմանական 800 հոգինոց գունդ մը որ Բէթմանկի մօտերը լրտեսելու ելած էր, կորսնցուցած է 38 հոգի. թշնամին որմածակերով լեցուն պատ նէշներու ետին պահուած էր :

Ս. Բէթէրսպուրկ 5 Օգոստոս. — Չիթա յի մօտ Ռուսները զարկին Չինացի կանոնա

ւոր զօրքերը. անոնց պետք և 200 հոգի սպաննելով, թնդանթ մը, հրացաններ և մեծաքանակ ուղղակիք գրաւեցին :

Յուսա ընդգիւնութիւնէ մը յետոյ Ռուսք գրաւեցին Եկրանի ամրոցը :

Լոնարա 5 Օգոստոս. — Մինչև հիմա 4000 Պօէրներ անձնատուր եղած են ի մուրիէս պուրկ և ինը թնդանթ յանձնած են :

Թշնամին Գրօնջիտանկ հարաւարողը գը ձէն դուրս հալեց կառապաւոր մը. տրկա ծը շատ մը մարտոց փոշուան պատճառ և զած էին իրարմէն :

Բարիկ 5 Օգոստոս. — Երրորդացիներու թշնամի Սիւլէնի-Հէնկ զօրավարը սպարա պետ կաշարուած է Չիթմանի բանակին :

Թիէն-Չին 5 Օգոստոս. — Ճարմանական լրտեսող Չոխա մը գտած է Բէթմանկի մէջ 8000 Չինացի՝ դեռին երկու եղերքը պատ նէշաւորուած : Չօսլար Սըր Ա. Կէշի և իր սպայակոյտը կ'ընկերանաւ այս Չոխաին . Ռուսերն ալ մասնակցեցան այս զինու թեան :

Ուաշինկթըն 6 Օգոստոս. — Լուր կը շը փի թէ երկար կալւ մը տեղի ունեցած է կիրակի ի Բէթմանկ :

Չինացիները նահանջեցին բայց դաշ նակցաց կորուստը 1200 հոգի է մեծ մա ստմը Ռուս և ճարմոցի :

Բրէթօրիա 6 Օգոստոս. — Եան Համիլ րթընկը շանայ շարժառանգեալ փրկել Ռիւս թէթնպուրկ ուր մեր զինւորներուն կացու թիւնը առաջուան կաշարչութեն աւելի դժ ուար կեղեւայ :

Ե Ի Ր Ո Պ Ա Կ Ա Ն Թ Լ Թ Ա Բ Ե Ր

Բարիկ 30 Յուլիս 1900

ՅԻՐԱԳՐԱՆ ԲԵՊՁԻ ԵՄԱԿԻ Ա. ԵՐԵՎԱՆԻՍԵՐ.

Արդէն շատ թերթիք հրատարակեցին թէ՛ Բարիկէ մէջ հատուտեր է մի քու նի ախտներէ ի վեր Գրագարան-Բնթերցա տուն մը, ուր կ'ստացուին ԳՊԻ չափ հայ և օտար թերթեր :

Այդ Գրագարան-Բնթերցարանի ընկե րութիւնը անցեալ ուրբաթ երեկոյ երեկոյթ մը տուաւ, որուն մասնակցեցաւ Իտա լիան նոր վերադարձող մի երիտասարդ հայ երգիչ :


Երեկոյթի ժամանակ երգեցողութիւն ներ (Խմբով կամ առանձին) պարեր և նը ուադամութիւններ տեղի ունեցան :

Ներկայ էին քաղաքուն յիտունի չափ անձինք, որոցմէ մօտ առաջ չափ հայ տի կիներ և օրիորդներ :

Ան կարծէք թէ մոլո օրիորդները կամ տիկինները Բարիկի մէջ յմալող հայերէն են, ոչ երբէք, ևս ոտն է զմէ գրմարու թեալը կը տեղափոխուին :

Այդ տիկիներն ու օրիորդները, այն հայերէն էին որոնք ցուցանողի տարի ժամանակաւորապէս Բարիկ կը գտնուին և որոնք լսելով որ Հայկական երեկոյթ մը տեղի պիտի ունենայ, ետնք քրտած եկած էին :

Կ'իմանանք թէ փոշիկ հատոյթ մը բերեր է այդ երեկոյթը Գրագարան-Բնթեր ցարանին և դա միայն ընթացեալար և



զած նուիրատուութիւններէն, վասնզի երեկոյթը մուտքով չ'էր:

Կը լսենք թէ ընկերութիւնը միաբունի աւելի մեծ երեկոյթ մը սարքել, քիչ ատենէն, նոյնպէս ի նպաստ Գրադարան-Ընթերցարանին:

Յաջողութիւն կը մաղթենք նորահաստ ընկերութեան:

Մ. Ս. ԴԱԻԹ ԲԷԿ:

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ  
ԿԻՐԱԿԻ 5 ՕԳՈՍՏՈՍ 1900

Table with 6 columns: Երկու թիւ, Պարզ և, 20 ձր. կը շարին, 10 ձր. կը շահին

ՀՅԻՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns: ԿԻՐԱԿԻ 5 ՕԳՈՍՏՈՍ 1900

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

Ներուանի Տիար Ս. Ֆէլէկեանի վերոյիշեալ հեղինակութեան երրորդ ֆորման ալ հրատարակուած է:

Բաժանորդագրուելու փափաքողք, ինչպէս արդէն ծանուցուած է, կրնան դիմել «Արշալոյս» ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ. ուր հեղինակը կը գտնուի կէսօրէ վերջ ժամը 5-7:

ՀԱՒԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՈՒԷՆ Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աշակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած ոոյն հաւաքածոյէն գնել փափաքողներն կամ բաժանորդագրուել ուղղորդներն, կրնան դիմել Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԳԻՐ-ՏՆՈՐԷՆԻՆ:

Տիար Մ. Հայկունի աստի ուղեւորելուն պատճառաւ, իւր հրատարակած «Վարագոյր Սարգիսի Կենաց» գրքին սակաւթիւ օրինակներն յանձնած է Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ. Գնել փափաքողք կրնան հոն դիմել:

Քանի մը օրինակ մէկ անգամէն գնողին 20 առ հարիւր զեղջ կը լինի:

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՐՇԱԼՈՅՍԻ»

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻՒԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՉԲԸ

Օտանիյի ղեղարանին ղիւնացի փողոցին մէջ:

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7էն մինչև երեկոյեան ժամը 8: ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին:

Այցեխարտեր, Երջարեականներ, Գիտեր, Հրաշխագրեր, Մանսրքներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տուններ և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտագնութիւն և չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՍԻ ԵՆ:

ԿՈՊԵՌ ՊԵՆԼԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐ:

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՉԱՏՈՒՆ

Տասներկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած և փորձառութիւն ստացած է:

Պոլսոյ մէջ Ապտուլլահ եղբայր տան, ինչպէս և ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լէ. քէճեանի գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Էօզպէի յի Շարխա Իսմէլ Օթէլ, ՇԷՔԷՐՏՍԻ ճիշտ դիմաց թիւ 3 արարթրմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս և գուրսը կուսփներ ի հարկին:

Ակրանսխանս ընական մեծութեամբ: Կենդանագիրներ ամբողջական մեքենայով որոնք երբէք չ'են աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ ընական գոյներով միւլտաքիւր:

Իւզաներկ և ջրաներկ պատկերներ և ըն: Լուսանկարի և պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ոչքրոշ, ճշվիշորքման և ըն:

Իրեն դիմող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ:

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Յ  
ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ  
ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՍԱԳՆՈՒՄ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ օր և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ԻԿՈՒՅԻՐԷ

ՏՕՔԹ. Ա. Յ. ԳԻՐԵՍՈՒԹԻՒՆ

Ի Շարխա Գրք-Պէշ, թիւ 20

Իր ՁԻԻ խորհրդակցութիւնները սակից վերջը, միայն ուրբաթ օրերը կես օրէ առաջ ժամը (ը. ե.) 9էն 11 որոշած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն դիմել ուղղակի աղքատ հիւանդներու:

Գ Ա Ֆ Է Ս Օ Ք Ա

Տիգրան Կոստանեան պատիւ ունի ծանուցանել Արգոյ հասարակութեան թէ՛ վերջերս սկսած է իւր Փաշար-Մրտրի խանութիւն մէջ պատրաստել Ենմէնի սառն ին սակեղաններ և անխորդար տեսակէն իրեն դիմող յաճախորդներ օրան 16 զրոյ ուղի հաշուով, զուտ քաղց պիտի կրնան դնել. կը յայտարարէ մէջ ալ ուղղակի զտնելով:

ԳՐԵՔ ՈՐԶՈՂՆԵՐՈՒՆ

Գահիրէի և չրվակայից գրասէր Հայ հասարակութեան գիւրութիւն մը տալու մտքը կը ծանուցուի թէ Հայերէն սանկ գիրք, (Իսախան, Կարոյան, Գիսախան, Գրական Արուեստական, Բանասիրական, Վիպական եւ այլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլսոյ, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վիեննայի ու Վիեննայի կարելի է գիւրամատչելի պայմաններով ձեռք բերել՝ դիմելով Տիար Կ. Նաւասարդեանի, Գալտեան վարժարան Հայոց ի Գահիրէ:

ՏՕՔԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՍՏՈՐԱՐՈՅԹ

Ապսիմ Շարխա Բուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակումներ:

Կը գաղթեցնէ վայրկենապէս ակալից ցուերը, ամբողջական նորագոյն մեթօտով իւր պատրաստած գեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակումներուն սակունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ձրի գարմանում, ամեն օր կէսօրէ ետք ժամը 3-5:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ օր և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:

ԱԼԷԻՍԻՍ ԼԱՎԻՉՈՎ գլխաւոր գործակատար յԱղքատներու: